Համայնքների ամրացումը խիստ ձեռնտու էր ցարական Ռուսաստանին, որովհետև նրա միջոցով գյուղացիներից հարկերը գանձվում էին համապարտ երաշխավորության սկզբունքով։ Ինչպես տեսանք, Զանգեզուրը Ռուսաստանին անցնելուց հետո հարկերի մեջ մեծ պարզորոշություն էր մտել և արդեն գանձում էին միայն օրինական տուրքերը։ Իսկ խաների ժամանակ հարկերը զգալի չափով շատ լինելուց բացի, նաև խիստ կամայական բնույթ ունեին թե՛ իրենց քանակով և թե՛ հարկման չափով։

Համայնքի ամրացման պրոցեսը կատարվում էր ավելի արագ, քան թե խոշոր գերդաստանների մանրացումը և իր հերթին նպաստում էր այդ պրոցեսի արագացմանը։ Մանր ընտանիքները ստանում էին ձայն գյուղական վարիչ մարմինների ընտրության ժամանակ[20] և ավելի հնարավորություն միջամտելու գյուղի ներքին կյանքի ղեկավարության գործերին, քան թե այն ժամանակն էր, երբ նրանք չէին անջատվել խոշոր գերդաստանի կազմից։ Համայնքը ձեռք էր բերում ավելի ճկունություն նոր տնտեսական պայմաններում բնակչության տեղաշարժելը դյուրացնելու համար՝ հարմարություններ ընձեռելով նոր անդամների ընդունելության և հեռացող անդամների գյուղական համայնքի հանդեպ ունեցած պարտականություններից ազատագրվելու։ Նշելի է, որ համայնքի այս ձևափոխման պրոցեսում իրենց պահպանողական ուժը ցուցաբերեցին հետաքրքրական հնավանդ ղեկավար սկզբունքները։ Հետազոտողները[21] շեշտում են այն, որ այդ պայմաններում գյուղական համայնքի հողօգտագործման իրավունքը ելնում էր հայ և առհասարակ արևելյան ժողովուրդներին առանձնահատուկ այն դրույթից, որ՝

«Հողը, ջուրը և վայրի բուսած խոտն աստծո պարգևներ են»

և միատեղ ապրող բոլոր մարդիկ հավասար իրավունք ունեն օգտվելու բնության տված այդ բարիքներից՝ հողից, ջրից, անտառից և խոտից։ Ժողովրդական իրավունքի թելադրությամբ Զանգեզուրի հայաբնակ գյուղերն էլ պահպանում էին հողօգտագործման հնավանդ համայնական բնորոշ ձևերից շատերը, որոնք ապացույց են գյուղական հասարակության անդամների միջև եղած սերտ տնտեսական կապակցության։ Անցյալ դարի վերջերին իրենց ուժը դեռ չկորցրած այդպիսի ձևերի մասին Ս. Զելինսկին իր հետազոտության մեջ բերում է հետևյալ տեղեկությունները[22].

«1. Հասարակության յուրաքանչյուր անդամ իրավունք ուներ հողից օգտվելու, բայց այդ իրավունքը վայելում էին միայն գյուղի իսկական բնակիչները, թեկուզև մտած չլինեին գյուղացիների պաշտոնական կամերալ ցուցակի մեջ»։

Այս սկզբունքի հիման վրա հասարակությունը անթույլատրելի էր համարում հող չտալ գյուղում ապրող և կողմնակի կոչվող այն անհատներին, որոնք այդպիսի ցուցակից դուրս էին մնում, որպիսիք էին ազնվական ծագում կամ ազնվականությունը նոր ձեռք բերած՝ ծառայության կամ ուսման ցենզով

---

[20] Ամեն շէնում կա որոշ տեղ գյուղական հավաքույթների համար. այսպես՝ Խնձորեսկում Սպիտակ կումիե դուռը՝ Սպիտակ գոմի դուռը և այլն, որոնք սովորաբար կոչվում են զուլամէջ։

[21] *Егиазаров С. А.*, Свод материалов по изучению экон. быта государственных крестьян Закав. края, Тифлис, т. I, 1887, и т. III, 1889, II отд., էջ 17—55։

[22] *Зелинский С. П.*, նշված աշխ., էջ 45, 48, 49։